

Ծրագրի Գործընկերներ



Մշակույթի, տեխնոլոգիայի, կրթության և զարգացման ասոցիացիա, Պլովդիվի համալսարան, Ստրանջա (AKTORPUS), Բուլղարիա



Դանուբ Դելտա հետազոտությունների և զարգացման ազգային ինստիտուտ, Ռ ՝ ո լ մ ի ն ի ա



Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի Հայաստանյան գրասենյակ



Բնության պահպանության միություն, Սաբուկո, Վրաստան

Թիրախային պահպանվող տարածքներ

- Բուլղարիայի «Ստրանջա» ազգային պարկ
- Ռուսիայի Դանուբ Դելտայի «Բիռեզերվ» համալիրը
- Հայաստանի «Դիլիջան» ազգային պարկը
- Վրաստանի պահպանվող տարածքների մի Մասը

Կոնտակտային տվյալներ

Պրոֆ.Նեվենա Միլեվա
Հեռ: +359-888-650653
Հեռ: +359-32-261251
E-mail: nevena.mileva@gmail.com

Նունե Հարությունյան
ԿՏԲԿ
Ազգային համակարգող
E mail: nune.harutyunyan@rec-caucasus.org
Հեռ: +37411575148

Սևծովյան ավազանի համատեղ գործողությունների 2014-2020 ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրամիության և մասնակից երկրների կողմից:
Հայաստան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռուսիա, Թուրքիա և Ուկրաինա:
Այս հրապարակումը պատրաստվել է Եվրամիության ֆինանսական օժանդակությամբ:
Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատու են բացառապես հեղինակները և ոչ մի դեպքում այն չի արտահայտում Եվրամիության տեսակետը:



Common borders. Common solutions



BSB Eco monitoring Շրջակա միջավայրի պահպանության համատեղ մոնիտորինգ Սևծովյան ավազանի երկրներում

<https://bsbecomonitoring.net/>

Project Number: BSB-884

Ծրագիրը

Իրականացնող երկրներ. Բուլղարիա, Ռումինիա, Հայաստան, Վրաստան
Տևողություն. 24 ամիս (2020 - 2022)
Բյուջե. 1 000 000 Եվրո

Ծրագրի նպատակները

«Սևծովյան ավազանի երկրների համար Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ համատեղ մոնիտորինգի» ծրագիրը նպատակ ունի լուծելու Սևծովյան ավազանի, ազգային պարկերի և հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր խնդիրները: Ծրագրի ընդհանուր նպատակն է բարձրացնել շրջակա միջավայրի մոնիտորինգի միջսահմանային համատեղելի տվյալների և տեղեկատվության մատչելիության մակարդակը Սևծովյան Ավազանի ազգային պարկերում և հատուկ պահպանվող տարածքներում:

Ծրագրի հատուկ նպատակներն են.

- Խելացի հարթակի զարգացման միջոցով նպաստել ազգային պարկերում և պահպանվող տարածքներում շրջակա միջավայրի մոնիտորինգի համար միջսահմանային համատեղելի տվյալների և տեղեկատվության մատչելիության մակարդակի բարձրացմանը:
- Խելացի տեխնոլոգիաների օգտագործման և համատեղ մոնիտորինգի միջոցով ծրագրում ընդգրկված ազգային պարկերում բնական միջավայրի վիճակի և ինվազիվ տեսակների առկայության մասին տեղեկատվության տրամադրում:
- Սևծովյան ավազանի երկրներում համատեղ շրջակա միջավայրի մոնիտորինգի անդրսահմանային կենտրոն ստեղծելու միջոցով բարելավել երկարաժամկետ միջսահմանային համագործակցությունը, ինչպես նաև տեղեկատվական և հետազոտական

կարողությունները՝ Էկոհամակարգերի վերափոխման և կենսաբազմազանության մոնիտորինգի համար



Ակնկալվող արդյունքներ

- Շրջակա միջավայրի համատեղ մոնիտորինգի անդրսահմանային կենտրոնի ստեղծում
- Առցանց մոնիտորինգային համակարգ (ԱՄՀ)՝ նախատեսված բնապահպանական տվյալների համար, որը կմիավորի չափման տվյալները և կծառայի որպես հարթակ հավաքագրված տեղեկատվության և տվյալների տարածման համար:
- Շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների հավաքման, մշակման ու վերլուծության խելացի հարթակի ստեղծումը, որը կիրականացվի ամպային վեբ ծառայության միջոցով, ինչն անհրաժեշտ է անլար սենսորային ցանցերից տվյալների հավաքագրման, նաև ավտոմատ տեսակապի բովանդակության ապահովման համար:

- Մշակվել է ծրագրի մեջ ընդգրկված տարածքներում բնական միջավայրի և ինվազիվ տեսակների համատեղ մոնիտորինգի մեթոդաբանություն: Մեթոդաբանությունը կապահովի համատեղելի տվյալների հավաքում, արդի տեղեկատվություն վնասված տարածքների գտնվելու վայրի և չափի և ճնշման տեսակների վերաբերյալ, հավանական աղբյուրների և սպառնալիքների ձևերի գնահատում:
- Կատարվել է համատեղ մոնիտորինգ ծրագրում ընդգրկված տարածքներում բնական միջավայրերի և ինվազիվ տեսակների վիճակի վերաբերյալ:
- Սևծովյան ավազանի պահպանվող տարածքների առանցքային հատվածների վրա առկա և հնարավոր գնահատված աղբյուրների ու ճնշման ձևերի հաշվետվություն:
- Մշակված միջոցառումներ բնական միջավայրի պաշտպանության և ինվազիվ տեսակների դեմ պայքարի համար:

